ԱՐԱ ՋՈՀՐԱԲՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ

14.07.2014 13:00

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Ջոհրաբյանը 2014թ. հուլիսի 11-ին, հանդիպել է Գյումրու քաղաքապետ Սամվել Բալասանյանին: Քաղաքապետի հետ Փաստաբանների պալատի նախագահը քննարկել է Գյումրիում գրասենյակ չունեցող փաստաբաններին անհատույց գրասենյակային տարածք տրամադրելու հարցը, որի փոխարեն փաստաբանները ամսական առնվազն մեկ անգամ անվճար իրավաբանական խորհրդատվություն կտրամադրեն քաղաքի և մարզի բնակիչներին: Ըստ Արա Ջոհրաբյանի, Շիրակի մարզում գործում է 38 փաստաբան, որոնցից 36-ը միայն Գյումրի քաղաքում:

Գյումրի քաղաքում 6 փաստաբանների գրասենյակով ապահովված չեն և անհրաժեշտություն կա այդ փաստաբաններին գործունեություն ծավալելու հնարավորություն ստեղծել:

Քաղաքապետ Սամվել Բալասանյանը կարևորել է փաստաբանական ծառայության տրամադրման անհրաժեշտությունը և նշել, որ երկրաշարժ վերապրած գյումրեցու համար պետք է վերականգնել հավատը, որը ժամանակին կորել է:

Արա Ջոհրաբյանն էլ իր հերթին նշել է, որ Պալատի միջոցներով կկահավորեն տրամադրվող տարածքը և հարմար պայմաններ կստեղծվեն թե՛ քաղաքացիների և թե՛ փաստաբանների համար:

Գյումրի կատարած այցի շրջանակներում Պալատի նախագահը հանդիպել է նաև մարզի փաստաբաններին, նրանց հետ քննարկել առկա խնդիրները: Արա Ջոհրաբյանը անդրադարձել է գյումրեցի փաստաբան Սուսաննա Մխիթարյանի շուրջ բարձրացված աղմուկի մասին: Նրա խոսքով, փաստաբանների պալատը կանգնած է յուրաքանչյուր փաստաբանի կողքին և պաշտպանելու է նրա մասնագիտական գործունեության ընթացքում ոտնահարված իրավունքները:

Ջուգահեռաբար հուլիսի 11-ին տեղի է ունեցել Շիրակի մարզի փաստաբանների համակարգողի ընտրություններ: Ընտրությունների արդյունքում Շիրակի մարզի համակարգող է ընտրվել փաստաբան Հայկ Հարությունի Հարությունյանը:

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })